



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Թ Ա Փ Ո Ի Ր Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ը

 րիստոնեական ընդհանուր եկեղեցու կամարների տակ նորից է թնդում Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության սրտառուչ օրհներգը, լույսի և կյանքի մեծ և կենսաբար ավետիսը՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց» և իր աստվածային լուսավորությամբ, քրիստոնեական հավատի ուրախությամբ լցնում բոլոր հավատավոր և քրիստոնյա ժողովուրդների հոգիները. «Որ յարոյցն զՅիսուս և զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ և յանդիման կացուցէ ձեզ հանդերձ» (Թ Կորնթ., Դ 14): Քրիստոսի Ս. Հարության տոներ բովանդակ մարդկության փրկության, ազատության, հոգևոր և բարոյական վերածնության, հավատի մեծագույն տոնն է գերազանցապես:

Հարության, հոգևոր վերածնության կենդանաբար շունչն է փչում այս առավոտ ամեն կողմ, և՛ բնության մեջ, և՛ մարդկանց սրտերում: Ս. Հարության տոներ ո՛չ միայն Քրիստոնեական եկեղեցու մեծագույն ու համաժողովրդական տոներից մեկն է, այլ նաև հոգու անմահության գրավականը:

Բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործությունները հարուստ են եղել հարության մշտնջող գաղափարներով: Հոգու անմահության, հանդերձյալ կյանքի գաղափարը, ժողովուրդների կրոնական պատկերացումները և հավատալիքները դրա առա-

վել կենդանի և վառ արտահայտությունն են հանդիսացել: Հին ժողովուրդների կյանքն առհասարակ եղել է իրավագուրկ, անպաշտպան, անուրախ, բայց չնայած այդ բոլորին, նրանց հատուկ է եղել ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, այն համոզմունքը, որ ԿՅԱՆՔԸ ԿԶԱՂԹԻ ՄԱՀՎԱՆ, բարին՝ շարին, լույսը՝ խավարին:

Միայն քրիստոնեական կրոնը, միայն Քրիստոսն իր հարությամբ ժողովրդի մշտնջող ու անորոշ գաղափարները դարձրեց պատմական ճշմարտություն, անհերքելի փաստ, որովհետև «Աստուած չէ մեռելոց, այլ կենդանեաց»:

Եվ ահա Քրիստոսի հրաշափառ Հարությամբ հին աշխարհի բարոյական, հոգեկան, իմացական սնանկության դուռն հասած մարդկության համար հեշեց հարության մեծ և սփոփաբար ավետիսը. «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ յիս, քէպէտն մեռանի, կեցցէ» (Յովն., ԺԱ. 25), որովհետև «Քրիստոս ի վերայ ամենեցուն մեռաւ» (Թ Կորնթ., Ե 13):

Քրիստոսի հարության պատմական իրողությունը հիմնաբարն է Քրիստոնեական եկեղեցու կյանքի և գոյության: Քրիստոսի մահն ու հարությունը առաքյալների փառգության ուղն ու ծուծն են կազմում այն աստիճան, որ Պողոս առաքյալը իրավացի

կերպով գրել է. «Եթե Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է Բարոգութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր» (Ա Կորնթ., ԺԵ 14): Քրիստոսի հարությունը ԿՅԱՆՔԻ հաղթանակն է ՄԱՀՎԱՆ վրա, ԼՈՒՅՍԻ հաղթանակը ԽԱՎԱՐԻ վրա, անմահության գործությունը, հավիտենական ու հավերժական կյանքի իշխանությունը մեռելության վրա, սիրո հաղթանակը ատելության դեմ, բարության հաղթանակը չարության դեմ, խաղաղության հաղթանակը՝ պատերազմի դեմ:

Քրիստոս իր հրաշափառ հարությունը կործանեց խավարի իշխանությունը, հարություն առավ մեռելներից, հաղթեց մեղսալից աշխարհին ու մահվան քաղաքության և հաստատեց աստվածային հավերժական սիրո քաղաքությունը:

Քրիստոսի հարությունն աշխարհում նոր շարժման, նոր կյանքի հիմքը դրեց գալիք բոլոր հավատացյալ սերունդների համար: Հարուցյալ Փրկիչը հեղաշրջեց պատմության ընթացքը, նոր և լուսավոր կյանքի ուղի բացեց մարդկության համար և լուսանաճանչ գաղափարով իմաստավորեց կյանքը:

Հարության մեծահռչակ լույսի առաջ փառավորեց առաքյալների մոֆի և հոգու վրա իշած ժամանակավոր տարակուսանքի և քերականականության քանձը Բողբ. «Զև ևս գիտէին զգիրս, քի պարտ է նմա ի մեռելոց յառնել»: Հարության կենտրոն բերկրությունը համակեց նրանց, որոնք մի պահ, իրենց սիրելի Վարդապետի, Բարեկամի, Ուսուցչի մահվամբ հուսախաբված զգացին իրենց և Նրա հետ գերեզման իշեցրին իրենց մեֆական վառ հույսերն ու պայծառ երազները: Բայց նրանք՝ առաքյալները, Քրիստոսի հարությունը նոր կյանք ստացան, արիացան, Քրիստոսի հարության ավետիսով վերակենդանացան և ամեն տեղ, ամենահեշտ սիրով և հավատով հարուցյալ Տէրը Բարոզեցին, մինչ հերանոս աշխարհը զայրություն էր լսում նրանց, «զայրագնեալ վասն ուսուցանելոյ նոցա... օտարոտի իմն դիցրոյի պատմիչ լինելոյ, Լանգի զՅիսուս և զյարութիւնն անտարանէն», և ուրախությամբ նահատակվեցին, վկաներ հանդիսանալով Քրիստոսի հարության. «Արդարեւ յարեալ Տէր և երևեցաւ մեզ»:

Հին աշխարհին և հին հասարակության նոր կյանք շնորհեց Քրիստոս իր աստվածային հարությամբ, արմատական հեղաշրջում առաջացրեց մարդկային մտածողության, բարոյականության, իրավունքի պատմության մեջ և փրկեց մեղքի, խավարի, տգիտության, նախապաշարունակների մեջ ապրող մարդկանց դժբախտ որդիներին. «Արի որ ենթեալ և կանգնեաց ի մեռելոց, և լուսատրեացէ զհեղ Քրիստոս»:

«Ի կոյս ի վիմէն» նոր առավոտ ծագեց աշխարհի վրա, և Քրիստոսի քափուր գերեզմանից աշխարհի շուր կողմերը տարածվեց Փրկչի հարության մեծ ավետիսը. «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեղ զկեանս պարգեկեաց»:

Ի՞նչպիսի նահատագրական դժբախտություն կլինէր մահը մարդու համար, երբ շինէր հարության սփոփարար գաղափարը, անմահության գիտակցությունը, որը լուսավորում է մահվան սարսափելի և անբափանցելի գաղտնիքը: Գերեզմանը մարդկային մարմինը միայն կարող է ընկուզել իր մութ ծոցում, իսկ ի՞նչ կարող է հոգու հետ, մի՞թե նառագայքը կրողվի: Արդարեւ, մահը իշխանություն չունի հոգու վրա, գերեզմանի մոայլ փոսից, մահվան արհաժիրեններից հետո ծագում է հարության խաղաղ ու խոստովանելից առավոտը մարդկանց համար, ինչպես զարուր՝ ձմեռային մեռելությունից հետո: Կյանքը վերածնվում և աճում, գեղեցկանում է մեռելով ամենուրեք և ամեն ժամանակ, ինչպես ցորենի հատիկը: Մահ չկա Քրիստոսի հարությունից հետո: Քրիստոս տիեզերքի կենսուրախ աղբյուրն է, կյանքի ստեղծագործ գործությունը: «Յիսուս Քրիստոս խափանեաց զմահ և լուսատարար զկեանս և զանեղծութիւն ի ձեռն անտարանին» (Բ Կորնթ., Ա 10): Քրիստոս լուծեց մահվան կապանները, շղթայեց և գերեզմանեց մահը. իր հզոր աստվածային ձեռքով «կապեալ զիշխանն մահածին», ցրեց գերեզմանի վրա ծանրացող սգի, տրամության, վշտի ծանր ու քանձը մառախուղը: Նա կյանքի պահապան հրեշտակը հանգիստացավ, որովհետեւ «Աստուած չէ մեռելոց, ալլ կենդանեաց»:

Մարդու մեծագույն իղձը եղել է հավերժական կյանքը: Մարդն այս անցավոր և սեռային աշխարհի համար չէ որ ծնվել է, այլ հավիտենականության համար: «Նա քնկած մի հրեշտակ է, որ միշտ երկինքն է երագում»: Քայց մարդը ի՞նչպես կարող է ապրել հավերժորեն, նայել միշտ, անվախճանորեն կյանքի խոստումնալից աչքերին... «Զի քէ ոչ հաւատայցէք, քէ ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր»: Ով կհավատա հարուցյալ Փրկչին, նա կապրի հավերժորեն, իսկ ով որ չի հավատա, «արդէն իսկ դատապարտեալ է»: Հավատացյալի համար գերեզման գոյություն չունի: Գերեզմանով չի վերջանում Բրիստոնյա մարդու կյանքը. գերեզմանը ունայնության մի տխուր ու մռայլ գույք չէ նրա համար, այլ ՄԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՆԱԽԱԳՈՒԹ, ՄԻ ԼՈՒՍԱՄՈՒՏ, ԲԱՅՎԱԾ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ, ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ, ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ: Քրիստոնյա մարդու մահը մահ չէ, այլ մի ժամանակավոր նիրհ, կարճատև նինջ, որից նա զարթնելու է մի երջանիկ օր, ժառանգելու համար անմահությունը, «ավելի կյանք»-ը. «զի գկեանս ունիցիք, առաւել ևս ունիցիք»:

Հարության սուրբ առավոտ...:

Հարության տունը իր սրբազան խորհրդով ամենից շատ խոսում է Բրիստոնյա հայ մարդու հոգու հետ նրա համար, որ հայ

հավատացյալ ժողովուրդը Քրիստոսի հրաշափառ հարության տունի մեջ միշտ տեսել և տոնել է իր ազգային-եկեղեցական վերածննդի տունը: Մեր ժողովուրդը ապրել, ստեղծագործել է միշտ Քրիստոսի հարության հավատով և հարություն է առել միշտ իր շարշարանների գերեզմանից և գիտցել է իր ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ վերածել ՀԱՂԹԱՆԱԿԻ: Ահա քե ինչու նա Քրիստոսի հարության ամենաշեղծ հավատացողներից մեկն է եղել, և երբեք չի քնկնվել բախտի հարվածներից. նա կրել է բյուրավոր աղետներ, կոտորածներ, բայց դուրս է եկել այդ զարհուրելի արհավիրքներից, տարերային չարիքներից իր հարության սրտառուչ և համբուրելի հավատով, և իր ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՎՐԱ ՎԱՌԵՆԻ ԵՒ ԻՐ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԽԱՐՈՒՅԿԸ ԵՎ ՀԱՎԵՐԺԱՅՐԵՆԻ ԵՒ ԻՐ ԱՊՐԵՆՈՒ ՀԶՈՐ ԿԱՄՔԸ:

Քսան երկար դարեր չեն կարողացել մահել հայ հավատացյալ ժողովրդի հարության հույսն ու հավատը:

Այսօր ահա իր գերեզմաններից, իր հայրենի ավերակներից հարություն է առել հայ ժողովուրդը և հարության գաղափարով գոտեպնդված ֆայլում է դեպի իր լուսապայծառ ապագան:

«Փա՛ո՛ք հրաշափառ յարութեան քո, Տէ՛ր»: Եվ փա՛ո՛ք հրաշափառ հարության քո, ժողովո՛ւրդ իմ, ժողովո՛ւրդ հայոց:

